ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

Ք. Եղեգնաձոր

«03» մայիսի 2016թ

N 36

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ նախագահի 1997թվականի մայիսի 6-ի թիվ 728-ՆՀ հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի և ՀՀ . քաղաքաշինության նախարարի 19.12.2013թ. № 12-Ն և 14.12.2013թ. № 371-Ն համատեղ հրամանը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարզի տարածքում քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ վարչական հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով ՝ համաձայն թիվ 1 հավելվածի :

2. Վարչական հսկողություն իրականացնել ժամանակացույցով՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Հանձնաժողովին՝ վարչական հսկողության արդյունքները ներկայացնել մարզպետի քննարկմանը:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված թիվ 1

ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2016թ. 9 մայիսի թիվ 35 որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾԵԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

Ա. Հովսեփյան - Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)

Ս. Աղաջանյան - Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ)

Ս. Հովսեփյան Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ (հանձնաժողովի անդամ)

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված թիվ 2

ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2016թ. 3 մայիս -ի թիվ 36 որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՀՄԱՆԵԼ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. ք. Եղեգնաձոր - 03.05.2016թ.
2. ք. Ջերմուկ – 04.05.2016թ.
3. ք. Վայք – 05.05.2016թ.
4. գյուղական համայնքներ - 10.05.2016թ. - 20.05.2016թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**

Վարչական հսկողության առաջադրանք

«03» Դեկտեմբեր 2016թ.

Մարզպետի №36 որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից վարչական հսկողություն իրականացնել՝ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի և ՀՀ քաղաքաշինության նախարարի, քաղաքաշինության բնագավառում իրականացվող վարչական հսկողության հարցաշարը հաստատելու մասին 19.12.2013թ. № 12-Ն և 04.12.2013թ. № 317 համատեղ հրամանով նախատեսված գործառույթները:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**